01/10.1/4308-09
2009-06-30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Տիգրան Արզաքանցյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում, օրենսդրական նախաձեռնությամբ առաջիկայում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնելու «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որում ներառված են նաև առաջարկվող փոփոխությունները՝ քաղաքացիների համար ավելի նպաստավոր խմբագրությամբ։ Այդ համատեքստում առաջարկում ենք առայժմ ձեռնպահ մնալ նախագծի քննարկումից և դրան անդրադառնալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացվելիք օրենքի նախագծի քննարկումների շրջանակներում։

Իրավական առումով, հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված օրենսդրական տեխնիկայի կանոնները, անհրաժեշտ է՝

1. Նախագծի վերնագիրը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին։ Նախագծի վերնագրում «պետական» բառից առաջ նշված «ՀՀ» հապավումը հանել, «օրենքում» բառից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերով, «փոփոխություն» բառը փոխարինել «փոփոխություններ» բառով.

2. 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության (2002թ. նոյեմբերի 19-ի Հ0-519-Ն) օրենքի (այսուհետ՝ օրենք) 56-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «Կասեցված կամ» բառերը.

3. 2-րդ հոդվածից հանել «Սույն» բառը և «հոդված 57-ի առաջին պարբերության» բառերը փոխարինել «57-րդ հոդվածի առաջին մասի» բառերով.

4. 3-րդ հոդվածից հանել «Սույն» բառը։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առայժմ նպատակահարմար չի համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Գևորգ Պետրոսյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ

Պ-628-19.05.2009-ՍՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

***Հոդված** 1.* Հայաստանի Հանրապետության Պետական Կենսաթոշակների Մասին (19 նոյեմբերի 20022թ. ՀՕ-519-Ն) 56-րդ հոդվածի երրորդ պարբերությունից հանել «Կասեցված կամ ...» բառերը իսկ նախադասությունը սկսել «Դադարեցված ... » բառով՝ մեծատառով։

***Հոդված** 2.* Սույն օրենքի հոդված 57-ի առաջին պարբերության «... երեք տարուց ոչ ավելի» բառերը փոխարինել «չորս տարուց ոչ ավելի» բառերով։

***Հոդված** 3.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Հիմնավորում

«ՀՀ Պետական Կենսաթոշակների մասին օրենքում» փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի ընդունման

Սույն օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության համար հիմք ենք համարել բազմաթիվ քաղաքացիների գրավոր եւ բանավոր դիմումները։